Նոր Կտակարանի վարդապետության սերտում. Գնահատում 1

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՍԵՄԻՆԱՐԻԱՅԻ ՁԵՌՆԱՐԿ

Վարդապետության սերտման հղումներ

Հարցեր 1-3-ի համար գրեք համապատասխան հղման տառը՝ յուրաքանչյուր արտահայտության դիմաց հատկացված դատարկ տեղում: Խնդրում ենք չօգտվել ձեր սուրբ գրություններից գնահատման այս մասի համար:

1. _____ «Եթէ մէկը ջրից և Հոգուց չծնուի, նա կարող չէ Աստուծոյ արքայութիւնը մտնել»:
2. _____ Հիսուս Քրիստոսը պատվիրեց՝ ճաշակեք հաղորդությունը «իմ յիշատակի համար»:
3. _____ «Ինձ մոտ եկեք, ամեն վաստակածներ եւ բեռնաւորուածներ. եւ ես հանգիստ կտամ ձեզ»:

ա. Մատթեոս 11.28–30

բ. Ղուկաս 2.10-12

գ. Ղուկաս 22.19–20

դ. Հովհաննես 3.5

ե. Հովհաննես 3.16

Սուրբ գրությունների հիմնական արտահայտություններ

Հարցեր 4-6-ի համար լրացրեք բաց թողնված բառերը վարդապետության սերտման սուրբ գրությունների հիմնական արտահայտություններում: Խնդրում ենք չօգտվել ձեր սուրբ գրություններից գնահատման այս մասի համար:

4. Հիսուսն ասաց. «Ես _____ քեզ երկնքի _____ները» (Մատթեոս 16.15–19)
5. «Թէ այսօր ձեզ Փրկիչ _____ Դաւիթի քաղաքումը. որ է Քրիստոս _____ը»: (Ղուկաս 2.10-12)
6. « _____ն _____ եւ _____ չունի, ինչպէս ինձ էք տեսնում որ ունիմ» (Ղուկաս 24.36–39)

Գնահատման մնացած մասի համար կարող եք օգտագործել ձեր սուրբ գրությունները:

Հարցեր 7-9-ի համար բացահայտեք վարդապետության սերտման հատվածներից մեկը կամ մի քանիսը, որոնք կարող են որևէ մեկին օգնել հետևյալ իրավիճակներում:

7. Դուք միսիոներների հետ եք, երբ ինչ-որ մեկը հարցնում է՝ արդյոք ինքը իսկապես մկրտության կարիք ունի, թե կարող է ուղղակի ընդունել Հիսուս Քրիստոսին իր սրտում:	
8. Կիրակնօրյա դպրոցում ձեր ծխի անդամը հարցնում է, թե ինքն ինչպես կարող է իմանալ, որ Եկեղեցում ուսուցանված վարդապետությունն Աստծուց է:	
9. Ինչ-որ մեկն ընտանեկան երեկոյի դաս է պատրաստում այն մասին, թե մենք ինչպես կարող ենք Հիսուս Քրիստոսի ավելի լավ աշակերտները դառնալ:	

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

© 2022 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. Տարբերակ. 2/21: *New Testament Doctrinal Mastery: Assessment 1*-ի թարգմանությունը. Armenian. PD60012661 201. Printed in the United States of America.

Հարցեր 10-11-ում ցուցադրեք հոգևոր գիտելիքներ ձեռք բերելու սկզբունքները՝ օգտագործելով ձեր գիտելիքն ու կարողությունը։

10. Ինչպե՞ս կբացատրեիք հոգևոր գիտելիքներ ձեռք բերելու հետևյալ երեք սկզբունքները մեկին, ով անծանոթ է դրանց։

    ա. Գործել հավատքով

    բ. Քննել հասկացությունները և հարցերը հավերժության հեռանկարով

    գ. Զգտել մեծացնել հասկացողությունը աստվածային աղբյուրների միջոցով։

11. Դուք ունեք մի ընկեր(ուհի), որը դժվարանում է հավատալ, որ Երկնային Հայրն ու Հիսուս Քրիստոսը սիրում են իրեն, և ցանկանում են իր հետ հարաբերություններ ունենալ։ Պատասխանեք հետևյալ հարցերին.

    ա. Ի՞նչ կխնդրեիք նրան անել՝ հավատքով գործելու համար։

    բ. Ինչպե՞ս կարող եք օգնել նրան՝ տեսնել իր իրավիճակը հավերժության հեռանկարով։

    գ. Վարդապետության սերտման հատվածները աստվածայնորեն նշանակված աղբյուրների օրինակներ են։ Վարդապետության սերտման ո՞ր հատված(ներ)ով կկիսվեիք նրա հետ։ Ինչո՞ւ։

12. Վարդապետութան սերտման 11 ուսումնասիրված հատվածներից որո՞նք են մեծապես ազդել ձեզ վրա և ինչո՞ւ։ Այս հատվածն ի՞նչ է ուսուցանում ձեզ Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի մասին։

© 2022 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. Տարբերակ. 2/21: *New Testament Doctrinal Mastery: Assessment 1*-ի թարգմանությունը. Armenian. PD60012661 201. Printed in the United States of America.